

Ժողովուրդ

142
(2622)

7 հոկտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 107



Հոկտեմբերի 5-ին՝ ՀՀ Ազգային ժողովում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հարցերին պատասխանելիս, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ սուտ է խոսել՝ հայտարարելով. «Այն պահին, երբ Հայաստանն ընդունել է «Մադրիդյան սկզբունքները»՝ որպես բանակցությունների հիմք, այդ պահից սկսած՝ ճանաչել է Ղարաբաղը Ադրբեջանի կազմում»:

Իրականությունը, սակայն, այն է, որ դեռևս 2007-ին որպես բանակցությունների հիմք ընդունված «Մադրիդյան սկզբունքները» ճիշտ հակառակի մասին են վկայել: Ավելին՝ այն առաջին փաստաթուղթն է, որտեղ ամրագրվում է Արցախի ինքնորոշման իրավունքը, իսկ դա նշանակում էր Արցախի ինքնորոշում, բնականաբար՝ Ադրբեջանի կազմից դուրս:

Մեկ այլ հանգամանք էս. կարևոր է հիշել՝ Նիկոլ Փաշինյանը, գալով իշխանության, «Մադրիդյան սկզբունքներն» ու, ընդհարապես, ամեն ինչ դրեց մի կողմ եւ մեծախոսում էր՝ սկզբից ասելով, թե բանակցություններն իր՝ զրոյական կետից է սկսել, ապա հոխորտում էր՝ ինչ պետք է, դա էլ բանակցում ենք:

Նա հերթական անգամ մանիպուլացրել ու խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Հոկտեմբերի 5-ին Քաղաքաշինության, տեխնիկական եւ հորեռային անվտանգության տեսչական մարմնի խորհրդի նախագահ, ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանի կողմից պետք է ներկայացվեր տեսչական մարմնի ղեկավարը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խորհրդի նախագահ-նախարարը նիստը սկսելուց հետո անգամ չի իմացել, թե ով է լինելու նոր ղեկավարը: Ընդ որում ուշագրավ է, որ ներկա խորհրդի անդամները երկար սպասելուց հետո, չգիտես՝ ինչու, փորձել են կառավարության աշխատակազմից պարզել, թե ով է թեկնածուն, որպեսզի հրավիրեն: Աշխատակազմից տվյալները փոխանցելուց հետո միայն պարզվել է, որ թեկնածուն հայտնի հանրապետական շրջանակներից, Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանն է, որը ներկայացել է նիստը սկսելուց 40 րոպե անց, քանի որ ինքն էլ չի իմացել, որ պետք է ներկայանա: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս խայտառակ միջադեպի առիթով մեկնաբանություն ստանալ ՀՀ ԱԻՆ մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանից: Վերջինս նշեց. «Ինձ փոխանցեցին, որ, ըստ նախանշված ժամի, նիստը տեղի է ունեցել, տեսչականի ղեկավարն էլ մասնակցել է խորհրդի նիստին»:



Վարժական հավաքները լուրջ բարդությունների առջև են կանգնեցրել իրավապահներին: Բանն այն է, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, նրանք ստիպված են լինում ծանուցում ստացած, բայց հավաքներին մասնակցած անձանց բերման ենթարկել, որն ուղեկցվել է անգամ դա-նակահարությամբ: Լռու մարզի Արծնիկ գյուղում իրավապահները գնացել են գյուղի 39 տարեկան բնակչի տուն՝ հասկանալու համար, թե ինչու չի ներկայացել զինկոմիսարիատ: Իրավապահներին քաղաքացին դիմավորել է հայիոյանքներով ու փորձել դանակով հարվածել: Ավելին՝ այս օրերին իրավապահները փորձում են զինկոմ ներկայանալ չցանկացող անձանց հարազատներից պարզել, թե ուր են, ինչու չեն կատարում զինկոմի պահանջը, ինչը իրավապահների մոտ բարդություններ է առաջացնում, եւ վերջիններս լուրջ վիճաբանությունների մեջ են մտնում քաղաքացիների հետ: Բացի այդ, ողջ գործընթացը ուղեկցվում է մարդու իրավունքների կոպիտ խախտումներով, որի մասին ահազանգել է ՀՀ հատվածը, եւ երեկ նաեւ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն անդրադարձավ խնդրին՝ քննադատելով ՊՆ-ի գործելաոճը: Նշենք, որ 2022 թվականի սեպտեմբերի 29-ից հերթական պլանային վարժական հավաքներն են անցկացվում: Որոշումը կառավարությունն է ընդունել՝ հիմքում ունենալով Պաշտպանության նախարարության առաջարկած նախագիծը:



⇒ էջ 3

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Նարեկ Գրիգորյանը 2021 թվականին Գավառում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից առաջ գրություն է գրել կուսակցությանը, որ եթե չընտրվի Գավառ համայնքի ղեկավար, պատգամավորական մանդատից հրաժարվելու է: Նա չընտրվեց Գավառի համայնքապետ, սակայն ընտրություններից հետո շարունակեց մնալ պատգամավոր: «Ժողովուրդ» օրաթերթն անձամբ պատգամավորից հետաքրքրվեց՝ ինչու մանդատից չի հրաժարվում, ի վերջո գրություն է գրել, գրավոր խոստացել է: Ի պատասխան՝ Նարեկ Գրիգորյանը հերքեց. «Միանշանակ այդպիսի թուղթ չկա, ու ինձ համար զարմանալի բան է, քանի որ նման բան չի եղել: Ժողովուրդն է այդպես որոշել»: ԶՊ-ում, սակայն, խնամքով պահվում է այդ թուղթը: Հավելենք, որ նախորդ տարի տեղի ունեցած ընտրություններում 51 տոկոս ձայն էր ստացել գործող համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, իսկ ԶՊ-ական թեկնածուն միայն երկրորդն էր:



ԻՐԱՎԱԿԱՆ

3 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՄՈՒԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՏՆՎԱԾ ԳԵՊՔ

Երեք տարի առաջ՝ 2019թ.-ի նոյեմբերի 15-ին, Կոր Վահան Գրիգորյանը 77-ամյա ժամանակին հիմա...



տազայում պատերազմի մեջ ներքաշված Ռուսաստանում տիրող խառնակ վիճակը ու դրան հաջորդած հետազգա իրադարձությունները...

որ քննություն պետք է կատարելու է պարզեցնել, թե 16 խմ-ն ինչպես է ծախսվել մեկ օրում, սակայն նախաքննական մարմինն այդ մասով...

ԼՈՒՐԵՐ

ՄՊԱՆԵԼ Է ԿՆՈՋԸ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Նուբարաշենում կնոջը սպանել է ամուսինը...

Shamshyan.com-ը գրել էր, որ հոկտեմբերի 6-ին սպանություն է տեղի ունեցել Երևանում: Ժամը 07:10-ի սահմաններում...

ՏԵՂՈՒՄ ՄԱՐԱՑԵԼ Է

Հոկտեմբերի 5-ին՝ ժամը 13 անց 30-ի սահմաններում, Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքի 2006թ. ծնված ընկերը...

ԳՈՂԱՑԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 29-ին՝ ժամը 07.35-ին, ոստիկանություն զանգած տղամարդը հայտնել էր, որ գողացել են իր «ՎԱԶ-2106»-ը:

ԽԱՐԵՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԻՅ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Լոռու 3 բուժօգնության կենտրոնում հայտնաբերվել են խաբուրային ռեպրուզիայի գույքներ հասցեատերերի ղեկավարներ:

պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ում, «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ում, «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ում...

րապես, ի հայտ են եկել պաշտոնատար անձանց կողմից, ծառայողական լիազորություններն օգտագործելով, խաբուրային...

- Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:



Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս սահմալ խաղաճան կազմակերպման լիցենզիա:
Հովհաննես Կարապետյանը (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Խաղատան կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին»...

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ շահումներով խաղերի կազմակերպման համար տարեկան պետական տուրքը...

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է աղափոխել նոր կառուցվող բնակելի շենքերի սեյսմակայունությունը:
Տիգրան Թովմասյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ պետք է մանրամասն ուսումնասիրել կառուցվող շենքի շինարարական ինժեներական բանագրության եւ սեյսմիկ պայմանները...

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Երբ տեղի են ունենում ցնցումներ, եւ դուք գտնվում եք շենքի 1-3 հարկերում, պետք է արագ դուրս գալ շենքից: Իսկ եթե գտնվում եք ավելի բարձր հարկերում...

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ծնվել է 44-օրյա պատերազմի հերոս Դավիթ Հարոյանի եղբայրը՝ Հայկը: «Դավիթը երագիս, երեխու ձեռքը բռնած, տուն էր եկել: Մայրը հարցրել է՝ ով է այս երեխան: Պատասխանել է. «Զգիտե՛ս, ախպերս է»: Հիմա երեխան ծնվեց, անունը Հայկ դրեցինք: Դավիթ էինք որոշել, բայց Դավիթի ասելով՝ Հայկ ենք դրել»,-ասում է երեխայի հայրը՝ Գառնիկ Հարոյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a checkbox for 'անվճար' (free of charge). Includes contact info: 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 6.10.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶԵՆՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: